ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊՅԱՆ

ԵԿԵՔ ԲՈԼՈՐԴ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈՎԱՆԻԻՆ ՏԱԿ

Եկեք բոլորդ էջմիածնի հովանիին տակ,
Եփրատի ճամբաներով ըլլա թե Տիգրիսի խորխորատներով,
Եկեք, ինչպես գետերը կերթան ծովու և օվկիանոսի ուղիներով,
Եվ ինչպես վերաջլույսները կդիմեն այգաբացներու ջահին,
Բոլոր մահերուն վերև ան է լոկ հաղթանակողը,—
Խավարին մեջ փայլատակող Լուսավորչի սի՛րտը,—
Եկեք, ապրիլ ամսուն, որ մեռնիլ ամիսն եղավ ձեզի համար,
Հոն, ուր կյանքը անխոցելի է, հույսը՝ գերադրական,
Ուր Ամենակալին լույսերուն մեջ կանգնած ոտքի,
Ձեզի՞ կսպասե Ամենայն Հայոց Հայրապետը,—
Եկեք բոլորդ էջմիածնի հովանիին տակ:

Բոլոր դռները բաց են և ճանապարհները ծաղկազարդված,
Բոլոր բարձունքներուն վրա արեգակը սփռած իր պատմուճանը·
Մոռցած մահվան սեր և հողին սնագույնը,
Եկեք, ինչպես կուգան արշալույսին զավակները,
Բոլորիդ առջևեն ա՛յն, որ չընկրկեցավ երբեք,
Որ անսասանելին է, անդիմադրելին,
Որուն զինվորները արթո՛ւն են իրենց դիրքերուն վրա,—
Հավա՛տքը.— որուն մեջ կձայնե մեր նախնյաց ոգին,
Որուն մեջ ի՛նքն է, խոր Վիրապի սուրբը,—
Եկեք բոլորդ էջմիածնի հովանիին տակ:

Հարուցյալներուդ արևելյան բանակը,
Անիրավվածներուդ այդ տեղաշարժը, արյունի գետերեն ասդի՞ն,
Ձեր կոնակը ձգեցեք ինչ որ մահինն է, անէությանն,
Անա՛ հայրենի հողը, փոքր, այլ լեռներով երկնահասակ·
Անա՛ գետերուն շառաչը, հզորագույն հողմերուն տակ,
Ու անա՛ վերածնունդի իշխանները քաղաքե քաղաք,
Ի՞նչ պայծառ է Արագածի դեմքը և Մասիսն ի՞նչպես ձեռքի տակ...
Բարձունքներուն վրա չե՞ք տեսներ Հույսին դրոշակակիրները...
Ու փողերը, որ կսարսե՞ն երկնի մեռաղը, օ՜...
Եկեք բոլորդ էջմիածնի հովանիին տակ:

Ու հիմա բոլորված Մայր Տաճարին շուրջ,
Խոնված իր գմբեթին տակ,— արևելյան բանակայիննե՛ր դ,—
Ունկնդրեցեք գովաբանության աղոթքին, զոր Ամենայն Հայոց Հայրապետը
Կբարձրացնե առ Ամենակալը,— ովսաննա՜ ի բարձունս,
Ազգ մը առավել անմահ է, որքան հետն է իր մեռելներուն,
Որքան հզոր՝ հավատքի իր ուխտավորները,
Ու ձեր հավատքը չտատամսեցավ նույնիսկ փոքորիկին մեջ,
Որուն ջահերը առավե՛լ հրահրեցան հողմերու ծոցին,
Բոլոր անոնք, որ դեռ կհամենան Եփրատի ուղիներով· ձա՛յն տվեք,
Թող աճապարե՛ն գիշերը շիջած, չծլած աստղերը,—
Եկեք բոլորդ էջմիածնի հովանիին տակ: